# Կորած ոչխարը

Մի բարի հովիվ ուներ 100 ոչխար: Մեկը կորավ:



Նա թողեց 99-ին՝ կորած ոչխարին փնտրելու համար:



Նա ուրախացավ, երբ գտավ ոչխարին: Նա ուրախացած տուն էր գնում՝ ոչխարն ուսերին դրած:

Նա կանչեց իր ընկերներին և հարևաններին. «Ինձ հետ ուրախացե՛ք, որովհետև իմ կորած ոչխարը գտա», - ասաց նա (Ղուկաս 15.6):



## Դա ի՞նչ է նշանակում

Նրանք, ովքեր մեղք են գործում, նման են կորած ոչխարների: Փրկիչն ուսուցանել է, որ ուրախություն կլինի երկնքում, երբ մեղավորն ապաշխարում է (տես Ղուկաս 15.7):

## Ո՞վ է մեր Բարի Հովիվը:

«Մեր Բարի Հովիվն անփոփոխ է և այսօր նույն կերպ է վերաբերվում մեղքին և մեղավորներին, ինչպես այն ժամանակ, երբ քայլում էր երկրի վրա: . . . Նա այնքան շատ է սիրում մեզ, որ ճանապարհ է տրամադրել, որպեսզի մենք ապաշխարենք և մաքուր դառնանք, որպեսզի կարողանանք վերադառնալ Նրա և մեր Երկնային Հոր մոտ:

«. . . Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսը մեր Բարի Հովիվն է, ով սիրում և հոգ է տանում մեր մասին:. . . Նա ճանաչում է մեզ և իր կյանքը դրեց իր ոչխարների համար»:

Երեց Դեյլ Գ. Ռենլանդ, Տասներկու Առաքյալների Քվորումից, 2017 թ-ի ապրիլի գերագույն համաժողով (*Ensign* կամ *Լիահոնա*, մայիս 2017, 32):

ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄՆԵՐԸ՝ ԹԻՄ ԲՐԵԴՖՈՐԴԻ